

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ՌԵԹԷՈՍ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ

1952 թ.ի Մարտ 9-ին, Պեյրուքի Ամերիկեան Համալսարանի հանդիսասրահին մէջ, տեղի կ'ունենայ մեծանուն դաստիարակ, գրագէտ, մանկավարժ ու ֆարտասան Ռեթէոս Յ. Պերպերեանի ծննդեան հարիւրամեակին նուիրուած հանդիսութիւն մը, որուն բարձր հովանաւորութիւնը կը ստանձնէ Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան: Հանդիսութեան ներկայ կը գտնուին ուսուցչապետին երկու հարազատները՝ Մաննիկ եւ Շահան Պերպերեանները:

Կը բանախօսեն «Երիտասարդ Հայուհի»ի խմբագրապետուհի Սիրան Սեգա եւ Գայրեվանֆի ուսումնապետ՝ Բիւզանդ Եղիայեան, նիւթ ունենալով՝ յաջորդաբար, Ռ. Պերպերեանի «Անճնաւորութիւնն ու իր Դրոշմը» եւ Ռ. Պերպերեանը որպէս «Ուսուցիչ ու Դաստիարակ»: Հարիւրամեակի այս հանդիսութեան երրորդ բանախօսը պիտի ըլլար Կոստան Զարեան, որ պիտի խօսէր «Գրագէտ ու Ճարտասան» Ռ. Պերպերեանի մասին: Սակայն, անակնկալ անհանգստութեան մը պատճառով Կ. Զարեան կը բացակայի հանդիսութենէն, բայց իր մասնակցութիւնը կը Բերէ ստորեւ հրատարակուող գիրով, որ կը կարդացուի բեմէն: Այդ գրութիւնը, իր անտիպ ըլլալու հանգամանքին կողմէն, սփանչելի վկայութիւն մը կը հանդիսանայ հայ գրակաւութեան եւ մշակոյթի երկու պայծառ անուններու՝ Ռ. Պերպերեանի եւ Կոստան Զարեանի մասին:

Ուսուցչապետ Ռեթէոս Պերպերեանի սաներէն՝ Տիար Օննիկ Գոչունեան, իր մահէն (1981 թ.) մէկ քանի ամիսներ առաջ ստորեւ հրատարակուող Կոստան Զարեանի խօսքը յանձնեց Հայկազեան Գոլէնի Հայագիտական Գրադարանին:

Սիրելի Շահան,

Ձեմ իմանում ինչպէս յայտնեմ իմ ցաւս, որ անակնկալ ան-
հանգստութեան պատճառով ի վիճակի չպիտի լինեմ մասնակցելու
մեծանուն Հօրդ նուիրում զհանդէսին: Ռեթէոս Պէրպէրեանի դերը,
իրբեւ դաստիարակ, դրադէտ եւ խորհող, մեծ է եղել Ոսկեղջիւրի
ափերին զարգացող արեւմտահայ դրականութեան Առաջի Վերա-
ծնողեան շրջանին: Չերազի, Տէմիրճիպաշեանի եւ, քիչ աւելի ուշ,
Գր. Չօհրապի, Մամբեանի, Տիրան Չրաքեանի եւ մի հոյլ ուրիշ
տաղանդաւոր մարդկանց հետ, նոքա կերտել են հայ լեզուի եւ գրա-
կանութեան ա՛յնպիսի յուշարձաններ, որոնց լոյսը մինչեւ այսօր
դեռ ներուժօրէն լուսաւորում է զարգացող հայ մտքի ոլոր եւ կոպ-
ճուտ ճամբաները: Ու Ռ. Պէրպէրեանը ոչ միայն գրել ու քարոզել
է, այլ իրբեւ հմուտ եւ հաւատաւոր դաստիարակ, իր ստեղծած դրպ-
րոցի միջոցով, իր դադափարներին մարմին է տուել եւ հարկւրաւոր
աշակերտների միջոցով հայ ընդհանուր մտաւոր մակարդակը բարձ-
րացրել եւ խորացրել է: Մտքի հերկած այդ աղօսումների վրայից
դեռ մինչեւ այսօր անցնում են իր հոգու ճառագայթող ալիքները:

Ես միշտ հաճոյքով եւ փսոսով եմ յիշում Սկիւտարի այն հե-
ռաւոր օրերը, երբ իրբեւ Պէրպէրեան դպրոցի ուսուցիչ, ժամանա-
կիս սղութեան պատճառով, ստիպուած էի դեռ լոյսը հազիւ բաց-
ուած վեր ցատկել, հագնուել եւ, նախաճաշիկս ճամբան ծամելով,
չտապել բլրան վրայ բարձրացող դպրոցը՝ ժամը վեց ու կէսին կամ
եօթին դասս աւանդելու համար, կայտառ, խելացի, իմանալու ծա-
րաւով լեցուած աշակերտներին: Ու հազիւ վերջացած՝ պէտք է վա-
ղէի հասնելու համար դէպի քարափը վար գլորուող ճոճոսն, խար-
խուլ ինքնաշարժին, որպէսզի նաւը չկորցնեմ եւ հասնեմ Կենտրո-
նականի կամ Եսայեանի առաւօտուայ առաջին դասին: Յիշում եմ
լաւ, որ այդ ճամբորդութիւնների ընթացքին Ռ. Պէրպէրեանի ոգին,
որ շարունակում էր տիրել իր եւ Պոլսոյ գրեթէ բոլոր դպրոցների
վրայ, ինձ առաջնորդում էր եւ ոգեւորում:

Սեղմում եմ ձեռքդ եւ մնում միշտ քո

Կ. ԶԱՐԵԱՆ

Մարտ 9, 1952
Բէյրութ